

1. ԳԻՐՔԸ

Մարդու ստեղծած տարատեսակ գործիքներից գիրքն, անտարակույս, ամենազարմանահրաշն է: Մնացած բոլորը նրա մարմնի հավելվածներն են: Մանրագիտակը, հեռագիտակը տեսողության հավելվածներ են, հեռախոսը ձայնի հավելված է. հետո գալիս են գուլթանը և սուրը՝ ձեռքի հավելվածները: Բայց գիրքն ուրիշ է. գիրքը հիշողության և երևակայության հավելվածն է:

Շուուի «Կեսարն ու Կլեոպատրան» ստեղծագործության մեջ Ալեքսանդրիայի գրադարանի մասին ասվում է, որ վերջինս մարդկության հիշողությունն է: Նույնն էլ գիրքն է, բայց մի փոքր ավելին. այն նաև երևակայությունն է: Թե չէ ի՞նչ է մեր անցյալը, եթե ոչ երազների շարք: Ի՞նչ տարբերություն կարող է լինել երազները հիշելու և անցյալը հիշելու միջև: Հենց դա էլ գրքի կատարած ֆունկցիան է:

Իմ մտքով անցել է երբևիցե գրի առնել գրքի պատմությունը: Նկատի չունեմ՝ ֆիզիկական տեսանկյունից: Ինձ հետաքրքրում են ոչ թե առարկայական գրքերը (հատկապես գրապաշտների գրքերը, որոնք սովորաբար չափն անցնում են), այլ գրքի ստացած տարբեր գնահատականները: Շպենգլերն ինձնից առաջ է ընկել, նրա «Եվրոպայի մայրա-

մոռացում» գրքի վերաբերյալ հոյակապ էջեր կան: Որոշ սեփական դիտողություններով՝ պատրաստվում եմ անդրադառնալ Շպենգլերի ասածին:

Հնում գրքի մեր պաշտամունքը չէին դավանում, մի բան, որ զարմանալի է ինձ. գիրքը համարում էին բանավոր խոսքի փոխարինող: Այս ծեծված մեջբերումը՝ *Scripta manent, verba volant*¹, չի նշանակում, թե բանավոր խոսքը վազանցուկ է, այլ՝ որ գրավոր խոսքը կայուն է և մեռած: Փոխաբերելով բանավոր խոսքը թևեր ունի, թեթևություն, «թևավոր է և սրբազան», ինչպես կասեր Պլատոնը: Ուշագրավ է, որ մարդկության բոլոր մեծերը բանավոր խոսքի վարպետներ են եղել:

Դիցուք, առաջին օրինակը՝ Պյութագորասը: Գիտենք, որ Պյութագորասը դիտավորյալ երբեք չի գրել: Չի գրել, որովհետև չի կամեցել իրեն շղթայել գրավոր խոսքին: Անշուշտ, զգացել է, որ գիրը սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում, ինչպես հետո պետք է ձևակերպվեր Աստվածաշնչում: Նա պետք է որ դա զգար և այդպիսով չի կամեցել շղթայել իրեն գրավոր խոսքին, դրա համար Արիստոտելը երբեք չի պատմում Պյութագորասի մասին, այլ՝ պյութագորականների: Օրինակ՝ ասում է, որ պյութագորականները դավանում էին հավերժական վերադարձի հավատալիքը, — դոգմա, որը շատ ավելի ուշ պիտի հայտնաբերեր Նիցշեն: Խոսքը ցիկլային ժամանակի գաղափարի մասին է, որ սուրբ Ավգուստինուսը վիճարկում է «Աստծո քաղաքում»: Սուրբ Ավգուստինուսը մի գեղեցիկ փոխաբերություն ասում է, որ Քրիստոսի խաչը մեզ փրկել է ստորկյանի շրջանաձև լաբիրինթոսից: Ցիկլային ժամանակի գաղափարին անդրադարձել են նաև Հյուսիս, Բլանքին... Շատ ուրիշներ:

Պյութագորասը դիտմամբ չէր գրում. ուզում էր, որ իր միտքը իր մարմնական մահից հետո շարունակի ապրել սաների մտքում: Այստեղից է գալիս (ես հունարեն չգիտեմ, կփորձեմ լատիներեն ասել) *Magister dixit*-ը (Ուսուցիչն է ասել): Դա չի նշանակում, թե նրանց ձեռքերը կապված էին,

որովհետև ուսուցիչն այդպես էր ասել. ընդհակառակը, հաստատում է ուսուցչի սկզբնական միտքը մտածել շարունակելու ազատությունը:

Մենք չգիտենք՝ արդյոք ինքն է հիմնել ցիկլային ժամանակի ուսմունքը, բայց գիտենք, որ իր սաներն այն դավանում էին: Պյութագորասը Ֆիզիկապես մահանում է, և նրանք, մի տեսակ վերամարմնավորման միջոցով (Պյութագորասին սա դուր կգար), շարունակում են մտածել ու վերամտածում են նրա միտքը, իսկ երբ նրանց կշտամբում են որևէ նոր բան ասելու համար, նրանք նեցուկ են գտնում նշված բանաձևում. դա Ուսուցիչն է ասել (*Magister dixit*):

Ուրիշ օրինակներ էլ կան: Կա Պլատոնի վառ օրինակը, երբ ասում է, որ գրքերը նման են մահարձանի (նա կարող էր նկատի ունենալ քանդակները կամ նկարները), որոնք կարող են ողջ թվալ, բայց եթե հարց տաս, չեն պատասխանի: Դրա համար էլ, գրքերի այդ համրությունը շտկելու նպատակով, հորինում է պլատոնյան դիալոգը: Այսինքն՝ Պլատոնը բազմապատկվում է բազմաթիվ կերպարների՝ Սոկրատեսի, Գորգիասի և այլոց: Նաև կարող ենք մտածել, որ Պլատոնն ուզում էր սփոփվել Սոկրատեսի մահից՝ պատկերացնելով, թե Սոկրատեսը շարունակում է ապրել: Յուրաքանչյուր խնդրի պարագայում նա ինքն իրեն հարցնում էր. Սոկրատեսը սրա մասին ի՞նչ կասեր: Այդպես ինչ-որ կերպ ապահովվում է Սոկրատեսի անմահությունը, որը գրավոր ոչ մի տող չի թողել և նույնպես բանավոր խոսքի վարպետ էր:

Քրիստոսի մասին գիտենք, որ միայն մի անգամ մի քանի բառ է գրել, որոնք ջնջելու գործը ստանձնել է ավազը: Մեր իմանալով՝ ուրիշ ոչինչ չի գրել: Բուդդհան էլ է բանավոր վարպետ եղել. նրա քարոզներն են մնացել: Հետո ունենք սուրբ Անսելմի հետևյալ արտահայտությունը. «Գիրքն անգետի ձեռքը տալը նույնքան վտանգավոր է, որքան սուրը՝ երեսայի ձեռքը»: Գրքերի մասին այդպես էին մտածում: Ամբողջ արևելքում դեռ առկա է այն գաղափարը, որ գիրքը

որևէ բան չպետք է բացահայտի, այլ պարզապես պետք է մեզ օգնի Հայտնաբերելու ամեն բան: Չնայած երբայերենի իմ չիմացուլթյանը՝ ես մի փոքր կաբբալա եմ ուսումնասիրել և կարդացել եմ «Ձոհար» (Յուլացում), «Սեֆեր Եցիրա» (Գիրք արարման) գրքերի անգլերեն ու գերմաներեն թարգմանությունները: Գիտեմ, որ այդ գրքերը հասկացվելու համար չեն գրվել. դրանք ստեղծված են մեկնաբանվելու համար, խթան են, որպեսզի ընթերցողը հետևի մտքին: Դասական անտիկ աշխարհը գրքի մեր ակնածանքը չի ունեցել, թեպետ գիտենք, որ Ալեքսանդր Մակեդոնացին բարձի տակ էր պահում «Իլիականն» ու սուրը՝ այդ երկու գեները: Մեծ ակնածանք կար Հոմերոսի հանդեպ, սակայն նրան չէին համարում սրբազան գրող՝ բառի այն իմաստով, որ այսօր ենք հասկանում: Ջէր համարվում, որ «Իլիականն» ու «Ոդիսականը» սրբազան տեսքտեր են. այդ գրքերը հարգված էին, բայց դրանք կարող էին նաև քարկոծվել:

Պատոնը կարող էր իր Պետությունից վտարել բանաստեղծներին՝ առանց հերետիկոսություն մեջ կասկածվելու: Գրքի դեմ անտիկների այս վկայություններին կարող ենք ավելացնել ևս մի շատ հետաքրքրականը Սենեկայի վերաբերյալ: Լուկիլիոսին ուղղված իր հիանալի «Նամակներում»² նա դեմ է արտահայտվում շատ սնափառ մի անձնավորության, որի մասին ասում է, որ նրա գրադարանում հարյուր հատոր գիրք կա, իսկ ո՞վ (հարցնում է իրեն Սենեկան) կարող է հարյուր հատոր կարդալու ժամանակ ունենալ: Հիմա, ընդհակառակը, մեծ գրադարանները բարձր են գնահատվում:

Անտիկ շրջանում մեզ համար դժվար հասկանալի, գրքի մեր պաշտամունքին հակասող մի բան կա. գիրքը միշտ դիտվում է որպես բանավոր խոսքի փոխարինող: Բայց հետո արևելքից գալիս է նոր, անտիկ դասականին լրիվ օտար մի գաղափար՝ սրբազան գրքի գաղափարը: Երկու օրինակ վերցնենք՝ սկսելով ավելի ուշ թվագրվածից՝ մահմեդականներից: Վերջիններիս կարծիքով՝ Ղուրանը ավելի հին է, քան արարումը, ավելի հին, քան արաբերենը. այն Աստծո հատ-

կուլթյուններից մեկն է, ինչպես նրա ողորմածությունը կամ արդարամտությունը: Ղուբանում բավական խորհրդավոր կերպով հիշատակվում է գրքի մայրը: Գրքի մայրը Ղուբանի՝ երկնքում գրված օրինակն է: Դա կարող է համարվել Ղուբանի պլատոնյան արքետիպը, և նույն այդ գիրքը (այդպես Ղուբանն է ասում) գրվել է երկնքում, Աստծո հատկությունն է և ավելի հին է, քան արարումը: Այդպես են պնդում սուլեմները՝ մահմեդական վարդապետները:

Հետո մեզ ավելի մոտ օրինակներ ունենք. Աստվածաշունչը կամ, մասնավորապես, Թորան, կամ Հնգամատյանը: Համարվում է, որ այս գրքերը Սուրբ Հոգին է թելադրել: Հետաքրքիր փաստ է տարբեր հեղինակների և դարաշրջանների գրքերը միայն մեկ հոգուն վերագրելը, սակայն հենց Աստվածաշնչում է ասվում, որ Հոգին փչում է, որտեղ ուզում է³: Հրեաները մտածել են հավաքել տարբեր շրջանների տարբեր գրական գործերը և դրանցից մեկ գիրք կազմել, որի անունն է Թորա (հունարեն՝ «Բիբլիա»): Բոլոր այդ գրքերը վերագրվում են մեկ հեղինակի՝ Սուրբ Հոգուն:

Մի անգամ Բեռնարդ Շոուին հարցրել են, թե արդյոք նա հավատում է, որ Սուրբ Հոգին է գրել Աստվածաշունչը: Նա պատասխանել է. «Վերընթերցման արժանի ամեն գիրք էլ Սուրբ Հոգին է գրել»: Այսինքն՝ գիրքը պետք է հեղինակի մտահղացումից ավելի հեռու գնա: Հեղինակի մտահղացումը մարդկային խեղճ, սխալական բան է, իսկ գրքում պետք է ավելին լինի: «Դոն Կիխոտը», օրինակ, ավելին է, քան ասպետական վեպերի երգիծանքը: Դա բացարձակ մի տեքստ է, որտեղ պատահականութունը չի միջամտում բացարձակապես ոչ մի տեղ:

Պատկերացնենք այս մտքի հետևանքները: Օրինակ, եթե ասեմ.

Corrientes aguas, puras, cristalinas,
árboles que os estáis mirando en ellas,
verde prado, de fresca sombra lleno

Հոսող ջրեր՝ մաքուր ու բյուրեղյա,
 ծառեր, որ ձեզ նայում եք ջրերում,
 կանաչ մարգագետին՝ լի զով ստվերով,⁴

ակնհայտ է, որ երեք տողն էլ բաղկացած են տասր վանկից:
 Այդպես է ուզել հեղինակը. սա կամավոր է:

Բայց սա ի՛նչ է՝ համեմատած Հոգու գրած ստեղծագործության հետ, սա ի՛նչ է՝ համեմատած աստվածության գաղափարի հետ, որն իջնում է մինչև գրականություն ու գիրք է թելադրում: Այդ գրքում պատահական ոչինչ չի կարող լինել, ամեն ինչ պետք է արդարացված լինի, տառերը պետք է արդարացված լինեն: Հասկանալի է, օրինակ, որ Աստվածաշնչի սկիզբը՝ *Bereshit bara Elohim*, Բ տառով է սկսվում, որովհետև համապատասխանում է բարեխոսությունը՝ օրհնանքին: Սա մի գիրք է, որտեղ ոչինչ պատահական չէ, բացարձակապես ոչինչ: Սա մեզ ուղղորդում է դեպի կաբբալան, ուղղորդում է տառերի ուսումնասիրությունը, աստվածության թելադրած սրբազան գրքի գաղափարին, որը դառնում է անտիկների պատկերացման հակոտնյան: Վերջիններս բավական ազոտ էին պատկերացնում մուսան:

«Պատմի՛ր, մուսա՛, Աքիլլեսի քենը»,— ասում է Հոմերոսն «Իլիականի» սկզբում: Այստեղ մուսան համապատասխանում է ներշնչանքին: Փոխարենը Սուրբ Հոգին պատկերացնելիս խոսքն ավելի որոշակի և ավելի ուժեղ բանի մասին է՝ մինչև գրականություն իջած Աստծո: Գիրք գրողն Աստված է. այդ գրքում պատահական բան չկա՝ ո՛չ տառերի թիվը, ո՛չ յուրաքանչյուր տողի վանկերի քանակը, ո՛չ այն փաստը, որ տառերով կարող ենք բառախաղ անել, կարող ենք վերցնել տառերի թվային արժեքը: Այդ ամենը հաշվի է առնված:

Գրքի երկրորդ կարևոր գաղափարը, կրկնում եմ, այն է, որ այն կարող է աստվածային ստեղծագործություն լինել: Գուցե դա ավելի մոտ է այժմ մեր զգացածին, քան գրքի

անտիկների ունեցած պատկերացմանը՝ զուտ բանավոր խոսքի փոխարինողի դերում: Հետո անկում է ապրում սրբազան գրքի հավատալիքը և փոխարինվում է այլ հավատալիքներով: Օրինակ՝ նրանով, թե իբր յուրաքանչյուր երկիր ներկայացված է որևէ գրքով: Հիշենք, որ մահամեղականներն իսրայելցիներին գրքի ժողովուրդ են անվանում, հիշենք Հայնրիխ Հայնեի խոսքն այն ժողովրդի մասին, որի հայրենիքը գիրքն է՝ Աստվածաշունչը. այսինքն՝ հրեաների մասին: Ուրեմն մի նոր ըմբռնում ունենք, ըստ որի՝ յուրաքանչյուր երկիր պետք է ներկայացվի որևէ գրքով, համենայն դեպս, որևէ հեղինակով, որը կարող է լինել շատ գրքերի հեղինակ:

Հետաքրքրաշարժ է (չեմ կարծում, թե սա մինչ այժմ քննվել է), որ երկրներն ընտրել են այնպիսի անձանց, որոնք առանձնապես նման չեն իրենց: Մարդ մտածում է, օրինակ, որ Անգլիան իբրև ներկայացուցչի կընտրեր դոկտոր Ջոնսոնին, բայց ո՛չ, Անգլիան ընտրել է Շեքսպիրին, իսկ Շեքսպիրը, այսպես ասենք, անգլիացի գրողներից ամենաքիչ անգլիացին է: Անգլիային բնորոշ է understatement-ը՝ իրերի մասին մի փոքր պակաս պատմելը: Մինչդեռ Շեքսպիրը փոխաբերության մեջ չափազանցության էր ձգտում, և մենք բնավ չէինք զարմանա, եթե Շեքսպիրն, օրինակ, իտալացի լիներ կամ հրեա:

Մյուսը Գերմանիայի դեպքն է. այդ հոյակապ, հեշտությամբ մոլեռանդ դարձող երկիրն ընտրում է հենց հանդուրժող մի մարդու, որը մոլեռանդ չէ և որի համար չափազանց կարևոր չէ հայրենիքի գաղափարը. ընտրում է Գյոթեին: Գերմանիան ներկայացված է Գյոթեով:

Ֆրանսիայում հեղինակ չի ընտրվել, բայց միտում կա դեպի Հյուգոն: Իհարկե, մեծ հիացմունք եմ տածում Հյուգոյի հանդեպ, բայց Հյուգոն տիպիկ ֆրանսիացի չէ: Հյուգոն օտարական է Ֆրանսիայում, Հյուգոն՝ իր մեծ դեկորացիաներով, իր ընդարձակ փոխաբերություններով, բնորոշ չէ Ֆրանսիային:

Դեռ ավելի հետաքրքիր է Իսպանիայի դեպքը: Իսպանիան կարող էին ներկայացնել Լոպեն, Կալզերոնը, Կլեդոն: Բայց արի ու տես, որ ոչ. Իսպանիան ներկայացնում է Միգել դե Սերվանտեսը: Սերվանտեսը հավատաքննություն ժամանակակիցն է, բայց հանդուրժող մարդ է, մարդ, որին բնորոշ չեն իսպանական ո՛չ առաքինությունները, ո՛չ արատները:

ԹՎում է՝ երկրներից յուրաքանչյուրը մտածում է, որ պետք է ներկայացվի տարբեր ինչ-որ մեկով, նրանով, ով փոքր-ինչ կարող է մի տեսակ միջոց լինել, մի տեսակ բուժում, մի տեսակ հակաթուն իր արատների դեմ: Մենք կարող էինք ընտրել Սարմինտոյի «Փակունդոն»⁵, որը մեր գիրքն է, բայց ո՛չ. մենք՝ մեր ռազմական պատմությունամբ, թրի մեր պատմությունամբ, գրքերից ընտրել ենք դասալիքի քրոնիկները՝ «Մարտին Ֆիեռոն», որը թեկուզ արժանի է որպես գիրք ընտրվելու, բայց ինչպե՞ս մտածել, որ մեր պատմությունը ներկայացնում է անապատի նվաճման դասալիքը: Բայց և այնպես դա փաստ է. կարծես ամեն երկիր զգում է այդ կարիքը:

Գրքի մասին փայլուն ձևով բազմաթիվ գրողներ են գրել: Ես ուզում եմ նրանցից միայն մի քանիսին անդրադառնալ: Նախ կանդրադառնամ Մոնտենին, որը գրքին է նվիրել իր էսսեներից մեկը: Այդ էսսեում հիշարժան մի նախադասություն կա. «Ես առանց ուրախություն ոչինչ չեմ անում»: Մոնտենը նշում է, որ պարտադրողական ընթերցանության գաղափարը կեղծ գաղափար է: Ասում է, որ եթե ինքը գրքում խրթին գրվագ է հանդիպում, մի կողմ է թողնում գիրքը, որովհետև ընթերցանության մեջ երջանկության մի ձև է տեսնում:

Հիշում եմ՝ շատ տարիներ առաջ հարցում էր արվել այն մասին, թե ինչ է կերպարվեստը: Հարցրել էին քրոջս՝ Նորային, և նա պատասխանել էր, որ կերպարվեստը ձևերով ու գույներով ուրախություն պարգևեցող արվեստն է: Ես կասեի, որ գրականությունը նույնպես ուրախության ձև է: Եթե ինչ-որ բան դժվարություն է կարողում, ուրեմն հեղինակը ձախողել է: Այդ պատճառով եմ համարում, որ Ջոյսի պես

գրողն, ըստ էության, ձախողել է, որովհետև նրա ստեղծագործությունը ճիգ է պահանջում:

Գիրքը չպետք է ճիգ պահանջի, երջանկությունը չպետք է ճիգ պահանջի: Կարծում եմ՝ Մոնտենն իրավացի է: Այնուհետև նա թվարկում է իր սիրած հեղինակներին: Մեջբերում է Վերգիլիուսին, ասում է, որ գերադասում է «Հովվականքը» «Էնեականից»։ Ես գերադասում եմ «Էնեականը», բայց դա ոչ մի կապ չունի: Մոնտենը կրքով է խոսում գրքերի մասին, սակայն ասում է, որ թեպետ գիրքը երջանկություն է, բայց և այնպես տկար հաճույք է:

Էմերսոնը հակաճառում է. դա գրքերի մասին գոյություն ունեցող հաջորդ մեծ աշխատությունն է: Իր դասախոսությունն մեջ էմերսոնն ասում է, որ գրագարանը մի տեսակ մոգական գրասենյակ է: Այդ գրասենյակում հմայված ապրում են մարդկության լավագույն ոգիները, բայց սպասում են մեր խոսքին՝ իրենց համրությունը լքելու համար: Պետք է բացենք գիրքը, այդժամ կարթնանան: Նա ասում է, որ մենք կարող ենք ստանալ մարդկության ծնած լավագույն մարդկանց ընկերակցությունը, բայց նրանց փնտրելու փոխարեն նախընտրում ենք կարգալ մեկնաբանություններ, քննադատություններ ու չենք լսում նրանց խոսքը:

Ես քսան տարի շարունակ անգլիական գրականություն եմ դասավանդել Բուենոս Այրեսի համալսարանի փիլիսոփայության և բանասիրության ֆակուլտետում: Միշտ ասել եմ ուսանողներին, որ գրականության փոքր ցանկ ունենան, քննադատություն չկարդան, անմիջապես գրքերը կարդան. գուցե քիչ կհասկանան, բայց միշտ հաճույք կստանան ու ինչ-որ մեկի ձայնը կլսեն: Ես կասեի՝ հեղինակի ամենակարևոր բանը հնչերանգն է, գրքում ամենակարևորը հեղինակի ձայնն է, որ հասնում է մեզ:

Ես կյանքիս մի մասը նվիրել եմ բանասիրությանը և կարծում եմ, որ եթե երջանկության մի ձևն ընթերցանությունն է, երջանկության մյուս՝ ավելի փոքր ձևը պոետական արարումն է, կամ այն, ինչ արարում ենք անվանում, որը

մեր կարգացածի մոռացության ու վերհուշի խառնուրդն է: Էմբրսոնն ու Մոնտենը համակարծիք են, որ պետք է կարգանք միայն այն, ինչ հաճելի է մեզ, որ գիրքը պետք է երջանկության ձև լինի: Մենք բանասիրությանն այնքա՛ն բանով ենք պարտական: Ես աշխատել եմ ավելի շատ վերընթերցել, քան ընթերցել, կարծում եմ՝ վերընթերցելն ընթերցելուց կարևոր է, միայն թե վերընթերցելու համար հարկավոր է ընթերցած լինել: Ես գրքի այդպիսի պաշտամունք ունեմ: Կարող եմ դա այնպես ասել, որ պաթետիկ կլվա, իսկ ես չեմ ուզում, որ պաթետիկ լինի, ուզում եմ՝ գաղտնիքի նման լինի, որ պատմում եմ ձեզնից ամեն մեկին. ոչ թե բոլորիդ, այլ ամեն մեկիդ, որովհետև բոլորը վերացարկում է, իսկ ամեն մեկը՝ իրական:

Ես շարունակում եմ խաղալ, իբր կույր չեմ, շարունակում եմ գրքեր գնել, շարունակում եմ տունս գրքերով լցնել: Օրերս ինձ Բրոկհաուսի Հանրագիտարանի 1966 թվականի հրատարակությունն նվիրեցին: Ես զգացի այդ գրքի ներկայությունն իմ տանը, այն որպես երջանկության տեսակ զգացի: Այնտեղ էին քսանից ավելի հատորները՝ գոթական տառատեսակով, որը չեմ կարող կարդալ, քարտեզներով ու փորագրություններով, որոնք չեմ կարող տեսնել, ու միևնույն է, գիրքն այնտեղ էր: Ես կարծես զգում էի գրքի ընկերական ձգողությունը: Կարծում եմ՝ գիրքը երջանկության այն հնարավորություններից է, որ ունենք մարդիկս:

Ոմանք խոսում են գրքի վերացման մասին. ես կարծում եմ, որ դա անհնար է: Կարող են ասել. ի՞նչ տարբերություն կա գրքի ու թերթի կամ սկավառակի միջև: Տարբերությունն այն է, որ թերթը կարգացվում է մոռացության համար, սկավառակը նույնպես լավում է մոռացության համար, դա մեխանիկական և ուստի անցողիկ մի բան է: Գիրքը կարգացվում է հիշողության համար:

Սրբազան գրքի հասկացությունը՝ Ղուրանի կամ Աստվածաշնչի կամ Վեդաների (որտեղ նույնպես արտահայտված է այն միտքը, որ Վեդաներն են ստեղծում աշխարհը), կարող

է անցած լինել, սակայն գիրքը դեռ որոշակի սրբություն ունի, որ պետք է փորձենք չկորցնել: Գիրք վերցնելն ու բացելը գեղագիտական իրողության հնարավորություն է պարունակում: Ի՞նչ են գրքում պառկած բառերը: Ի՞նչ են այդ մեռած նշանները: Բացարձակապես ոչինչ: Ի՞նչ է գիրքը, եթե այն չբացենք: Ընդամենը թերթեր ունեցող թղթե ու կաշվե խորանարդ, բայց եթե այն բացենք, ինչ-որ արտասովոր բան է տեղի ունենում, իմ կարծիքով՝ այն ամեն անգամ փոխվում է:

Հերակլիտոսն ասել է (չափազանց շատ եմ կրկնել այս միտքը), որ ոչ ոք երկու անգամ նույն գետը չի մտնում: Ոչ ոք երկու անգամ նույն գետը չի մտնում, որովհետև ջրերը փոխվում են, բայց ամենաահավորն այն է, որ մենք գետից պակաս հարահոս չենք: Ամեն անգամ ինչ-որ գիրք կարդալիս գիրքը փոխված է լինում, բառերի իմաստային նրբերանգն ուրիշ է: Դրանից բացի՝ գրքերի վրա ծանրանում է անցյալը:

Ես խոսեցի գրաքննադատության դեմ և կուղղեմ ինձ (չնայած ի՞նչ կարևոր է ինձ ուղղելը): «Համլետը» ճիշտ այն «Համլետը» չէ, որ Շեքսպիրը հորինել է XVII դարի սկզբներին. «Համլետը» Քոլրիջի, Գյոթեի և Բրեդլիի «Համլետն» է: «Համլետը» վերածնվել է: Նույնը վերաբերում է «Դոն Կիխոտին»: Նույնը վերաբերում է Լուգոնեսին և Մարտինես Էստրադային. «Մարտին Ֆիեռոն» նույնը չէ: Ընթերցողները հարստացրել են գիրքը:

Երբ հին գիրք ենք կարդում, կարծես կարդանք այն ամբողջ ժամանակը, որն անցել է դրա գրման օրվա և մեր միջև: Այդ պատճառով հարկավոր է պահպանել գրքի պաշտամունքը: Գրքում կարող են շատ տպագրական սխալներ լինել, կարող ենք համաձայն չլինել հեղինակի կարծիքներին, բայց այն, միևնույն է, ինչ-որ սրբազան բան է պահում, ինչ-որ աստվածային բան՝ ոչ թե սնահավատ ակնածանքի, այլ երջանկություն գտնելու, իմաստություն գտնելու ցանկություն իմաստով:

Սա է, որ այսօր ուզում էի ձեզ ասել:

Մայիսի 24, 1978